ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՁԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՀԱՅԿ ՄԱՂԱՔԷԼԵԱՆ ՈՐ Ի ՄՈՍԿՈՒԱ, ՌԴ

Լուսոյ խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հաւատաւոր զաւակիդ:

Յարգարժան պրն. Մաղաքէլեան,

Այսօր գոհունակ սրտով առիթն ունենք բարձրօրէն գնահատելու մեր ժողովրդի ազգային-եկեղեցական կեանքում ունեցած Ձեր գովելի վաստակը: Տարիներ շարունակ Դուք աջակից էք մեր եկեղեցականներին եւ Ձեր կարողութիւններն ի սպաս էք բերում ՌԴ հիւսիսային շրջաններում ապրող մեր ժողովրդի զաւակների ազգային ու եկեղեցական կեանքի առաւել արդիւնաւոր կազմակերպմանը: Ձեր օգտաշատ ձեռնարկներն ու անկեղծ սրտից բխած բարեգործութիւնները կարեւոր դերակատարութիւն ունեն նաեւ հայրենի մեր երկրի առողջապահական եւ տնտեսական ոլորտների զարգացման գործում: Լինելով «Հայաստան» համահայկական հիմնադրամի խոշոր նուիրատուների շարքում, Դուք կարեւոր աւանդ էք բերել հայրենաշինութեանն ուղղուած համազգային ծրագրերի իրականացմանը՝ յանուն մեր ժողովրդի կեանքի բարգաւաճման ու առաջընթացի:

Հոգու խնդութիւն է Մեզ համար տեսնել հայորդուդ սիրայօժար յանձնառութեամբ Նորադուզում իրականացուող եկեղեցաշինութիւնը, որ Տիրոջ կամքով աւարտին պիտի հասնի՝ իր հովանու ներքոյ համախմբելով մեր ժողովրդի հաւատաւոր զաւակներին: Ուրախութեամբ ենք գալիս հաստատելու, որ Ձեր անունը մշտապէս պիտի յիշուի նաեւ իբրեւ Սուրբ Էջմիածնի բարերար, ով իր սրտաբուխ ընծայաբերումով իրագործեց վերանորոգութիւնը «Հայկաշէն» կաթողիկոսական ամառանոցի:

Այսօր բարեպատեհ առիթն ունենք անդրադառնալու նաեւ Ձեր ինքնաբուխ յանձնառութեանը՝ աւանդ բերելու Ռուսաստանի Դաշնութիւնում մեր Սուրբ Եկեղեցու գործունէութեան առաւել զօրացմանն ու արգասաւորմանը, որով ազնիւ նուիրատուութեամբ Ձեր մասնակցութիւնն էք բերում Մոսկուայի առաջնորդանիստ Եկեղեցու եւ եկեղեցական համալիրի կառուցման մեծարժէք աշխատանքին: Առ Աստուած փառաբանական աղօթքն է Մեր հոգում, որ ազգս հայոց օրհնեալ է Ձեզ պէս հաւատաւոր, ազգասէր, եկեղեցասէր ու Էջմիածնասէր զաւակներով:

Մեծարգոյ պրն. Մաղաքէլեան, բարձր գնահատանքի արժանացնելով Ձեր բազմաբդիւն ծառայութիւնները մեր Սուրբ Եկեղեցուն ու ժողովրդին եւ, սիրով ընդառաջ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի բարեջան Առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս

Ներսիսեանի խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Աղօթում ենք, որ Ամենակալ Տէրը շնորհի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին քաջառողջ ու արեւշող կեանքի բազում օրեր եւ մշտանորոգ յաջողութիւններով պսակի Ձեր ձեռնարկումները՝ ի պայծառութիւն մեր Սուրբ Եկեղեցու եւ ի բարօրութիւն Քրիստոսասէր մեր ժողովրդի:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 12-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ.
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 783